

«ՎԵՈՆԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	16
1.3. Ջրահեռացման համակարգ	16
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	18
1.5. Էներգոհամակարգ	19
1.6. Մեքենա-մեխանիզմներ	21
2. Առևտրային տնօրինություններ	23
2.1. Բաժանորդների տվյալներ	24
2.2. Հասույթ	24
2.3. Գանձում	27
2.4. Դեբիտորական պարտքեր	27
2.5. Ջրաչափեր	29
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	30
3. Տեխնիկական տնօրինություն	31
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	32
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	34
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	36
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ	37
4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	38
4.1. Համակարգչային ցանց	39
4.2. Ինտերակտիվ համակարգ	39
4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ	39
4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր	39
5. Լրատվական ծառայություն	40
6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	43
6.1. Փաստաթղթերի մշակում	44
6.2. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ	44
6.3. Դասընթացներ	44
6.4. Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2018.....	45
6.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	46

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Տարածաշրջանների տնօրինությունները ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրային առաջին տարեսկզբից նախաձեռնել են մասնավորապես խոշոր քաղաքներում տեղադրված պոմպակայանների տեխնիկական վիճակի և արդյունավետության առնչությամբ ուսումնասիրություններ: Դրանց արդյունքում հայտնաբերվել է, որ ուսումնասիրված պոմպակայաններում տեղադրված էին դեռևս նախորդ դարի պոմպեր, որոնք ոչ միայն հնամաշ էին, այլև ունեին բարձր էլեկտրաձախսատարություն և իրենց արդյունավետությամբ, մեղմ ասած, զիջում էին ժամանակակից պոմպակայաններին: Վերլուծության ցուցանիշներն արձանագրելուց հետո, Տարածաշրջանների տնօրինությունները ձեռնամուխ եղան պոմպակայանների օպտիմալացմանը մշակելով դրանք փոխարինելու հստակ ծրագիր: Մեկուկես տարվա ընթացքում նոր սերնդի բարձր ՕԳԳ ունեցող ժամանակակից պոմպեր են տեղադրվել մարզային մի շարք հասցեներում, իսկ որոշ պոմպակայաններ շահագործումից հանվել են՝ բարեկարգումների արդյունքում այլևս շահագործելու անհրաժեշտություն չունենալու պատճառով: Ժամանակակից պոմպակայանները, ոչ միայն նախորդների համեմատ հուսալի են և ունեն էլեկտրաէներգիայի նվազ սպառում, այլև դրանց շնորհիվ հնարավոր դարձավ նշված պոմպակայաններով սպասարկվող բոլոր շենքերում և փողոցներում ավելացնել ջրամատակարարման տևողությունը առանձին դեպքերում ընդհուպ 20 ժամով:



1.1 Ջրամատակարարման համակարգի կառավարում

Քաղաք Երևան

- Ֆանաբջյան փողոցով անցնող D=300մ պողպատե ջրագծի վրա փոխարինվել է D=300մ վթարված ջրագծի հատված, որի արդյունքում խնայվել է Q=0.4լ/վ ջրաքանակ:



Ֆանաբջյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Քանաբեռ 13 փողոցի ջրամատակարարման սխեմա

- Քանաբեռ 13 փողոցի վերջնամասում փոխարինվել է D=50մ ջրագծի վթարված հատվածը և բարելավվել դրա հարակից շենքերի ջրամատակարարումը:

● Դավթաշեն 1 թաղամասի 48 շենքի մոտակայքում $D=100$ մմ մետաղական վթարաված ջրագիծը $D=50$ մմ $L=14$ մ մետաղական ջրագծով փոխարինելուց հետո խնայվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Դավթաշեն 1թ., 48 շենքի ջրամատակարարման սխեմա



Քանաքեռավան 11 փողոցի ջրամատակարարման սխեմա

● Քանաքեռավան 11 փողոցի 53 տան մոտակայքում $D=150$ մմ ջրագծի վրա տեղադրվել է $D=100$ մմ ճնշման կարգավորիչ փական՝ ջրամատակարարման ցանցում ճնշումը կարգավորելու նպատակով: Բացի այս, փոխարինվել է նաև փողոցի վթարային $D=200$ մմ $L=80$ մ հատվածը՝ $D=150$ մմ պոլիէթիլենային ջրագծով: Կատարված աշխատանքների շնորհիվ խնայվեց $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:

● Տիչինա 3-րդ նրբանցքի 98 տան հարակից տարածքում վթարի վերացման նպատակով ջրագծի $D=50$ մմ $L=30$ մ քայքայված հատվածը $D=63$ մմ պոլիէթիլենային խողովակով փոխարինելուց հետո խնայվել է $Q=0,1$ լ/վ ջրաքանակ:



Տիչինա փողոցի ջրամատակարարման սխեմա



Փափազյան 29 շենքի ջրամատակարարման սխեմա

● Փափազյան 29 շենքի մոտակայքում առաջացած $D=100$ մմ $L=60$ մ ջրագծի վթարը վերացվել է $D=63$ մմ $L=60$ մ պոլիէթիլենային խողովակի ներարկման միջոցով: Արդյունքում խնայվել է $Q=0,4$ լ/վ ջրաքանակ:

● Սեպուհի 5 և Սեպուհի 3 հասցեներում խցափակումով շահագործումից հանվել են $D=50$ մմ $L=10$ մ և $D=50$ մմ $L=20$ մ վթարված պողպատե հին ջրագծերը՝ խնայելով $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Սեպուհի 5 և Սեպուհի 3 հասցեների ջրամատակարարման սխեմա



Ա.Սերոբ հասցեի ջրամատակարարման սխեմա

● Ա.Սերոբ 50 հասցեում խցափակումով շահագործումից հանվել է $D=40$ մմ $L=50$ մ վթարային հին ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=0.3$ լ/վ ջրաքանակ:

● Կոմիտաս 39 շենքի մոտակայքում Վրացական փողոցից դեպի շենքեր գնացող $D=100$ մմ ջրագիծը վթարվել էր, խնդրի լուծման նպատակով փոխարինվել է վերջինիս զուտակված $D=100$ մմ հատվածը և խնայվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:



Կոմիտաս 39 շենքի ջրամատակարարման սխեմա

● Նորք Մարաշ 13 փողոցում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում $D=20$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել և խցափակման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 1 լ/վ ջրաքանակ:

● Գոտիավորման խմբի կողմից իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում Էրեբունի վարչական շրջանի Ս.Դավիթ, Բելինսկի, Սարի Թաղ 17 և 14 փողոցներում հայտնաբերվել և վերացվել է թվով 4 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 3.5լ/վ ջրաքանակ:

● Բուռնազյան փողոցում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է $D=50$ մմ ջրագծի վթար, որը վերացվել է թուջե խողովակի կարանահայման և 2 հանգույցներում $D=50$ մմ ճկուն միացումների տեղադրման միջոցով: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ 1լ/վ ջրաքանակ:

● Ազատամարտիկների փողոցում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, խնայվել է մոտ 2.5լ/վ ջրաքանակ:

Քաղաք Գյումրի

● Ղանդիլյան 27 շենքի հարակից տարածքի վթարված պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=32$ մմ $L=15$ մ պոլիէթիլենային խողովակով և տեղադրվել $D=25$ մմ փական:



Ղանդիլյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գերցեն փողոցի ջրագիծը գտնվում էր քայքայված վիճառում, առաջացող վթարները վերացնելու նպատակով կառուցվել է $D=32$ մմ $L=15$ մ պոլիէթիլենային նոր ջրագիծ, որի շնորհիվ բարելավվել է նաև փողոցի ջրամատակարարումը:



Գերցեն փողոցի ջրամատակարարման սխեմա

● Կոմիտաս փողոցում իրականացվող ասֆալտապատման և փողոցի ընդհանուր բարեկարգման աշխատանքներով պայմանավորված փողոցը հատող գետակի կամրջի վրա կառուցվել է նոր պողպատե ջրագիծ $D=90$ մմ տրամագծով:



Կոմիտաս փողոցի ջրամատակարարման սխեմա

● Շչեդրին 10ա շենքում ջրի ճնշման կարգավորման և վթարների վերացման նպատակով խցափակվել է շենքը սնուցող քայքայված հին $D=50$ մմ ջրագիծը և փոխարենը կառուցվել $D=40-32$ մմ $L=65$ մ նոր պոլիէթիլենային ջրագիծ:



Շչեդրին փողոցի ջրամատակարարման սխեմա

● Եսայան փողոցի 15 դպրոցի մոտ խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=80$ մմ $L=100$ մ ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:




Եսայան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ղանդիլյան փողոցում, ցանցն առավել կառավարելի դարձնելու նպատակով, 68 տան մոտ շահագործումից հանվել է $D=50$ մ պողպատե ջրագիծը և գործող պոլիէթիլենային ջրագծում ներարկվել է $D=32$ մ $L=10$ մ խողովակ:



Ղանդիլյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Սափոյան փողոցի ջրամատակարարման սխեմա


● Սափոյան փողոցի 224 տնակային ավանի մոտ $D=100$ մ $L=200$ մ պողպատե ջրագիծը խցափակելու արդյունքում խնայվել է $Q=2.5$ լ/վ ջրաքանակ:



Ա. Պետրոսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ղանդիլյան և Ա.Պետրոսյան փողոցների խաչմերուկով անցնող $D=150$ մ $L=570$ մ պողպատե ջրագիծը խցափակելու միջոցով շահագործումից դուրս բերելու արդյունքում խնայվել է 6.7լ/վ ջրաքանակ:

Քաղաք Կանաձոր




Երևանյան 76 շենքի ջրամատակարարման սխեմա

● Երևանյան 76 շենքը և Հակոբյան փողոցները սնուցող ջրագծերը գտնվում էին քայքայված և վթարային վիճակում, ուստի, ըստ անհրաժեշտության փոխարինվել են դրանց $D=89$ մ հատվածները հետագա շահագործման հուսալիությունն ապահովելու համար:



Հակոբյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● «Մայմեխ» ջրատարի վրա առկա մարիչ հորը կառուցվել էր դեռ 1980-ական թվականներին ու գտնվում էր վթարային վիճակում: Անհրաժեշտ եղավ մարիչ հորը հանել շահագործումից և փոխարենը կառուցել $D=219$ մմ նոր ջրագիծ՝ աշխատանքների արդյունքում խնայելով $Q=5$ լ/վ ջրաքանակ:



Մայմեխ ջրատարի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Սևան

● Կումիտաս, Բարաջանյան և Ս.Սևանցի փողոցները սնող ջրագիծը գտնվում էր խիստ քայքայված վիճակում: Երկարատև շահագործման հետևանքով այն ենթարկվել էր կոռոզիայի, ինչը հանգեցնում էր հաճախակի վթարների: Խնորի կարգավորման նպատակով «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ: Շահագործումից հանված $D=25-150$ մմ $L=730$ մ պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=20-50$ մմ $L=440$ մ պոլիէթիլենային ջրագծով:

Վերակառուցման աշխատանքների շրջանակում կատարվել են նաև ջրաչափական դիտահորերի տեղադրման աշխատանքներ, թվով 16 բաժանորդների ջրաչափական սարքեր տեղափոխվել են սահմանագատման կետեր:

Կատարված աշխատանքների արդյունքում ապահովվել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, խնայվել է մոտ 5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ստեփանավան

● Քաղաքում շինարարական կազմակերպության կողմից կատարվող փողոցների հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ Տարածաշրջանի տնօրինությունը ձեռնամուխ է եղել նորոգվող հատվածների ջրագծերը ընկերության միջոցներով փոխարինելուն: Այս խողովակները 1990-ականներին տեղադրվելուց հետո չէին փոխարինվել, ուստի հնամաշ էին և հաճախակի վթարների պատճառ էին հանդիսանում: Խնորի վերջնական լուծման նպատակով տեղամասն արդեն իսկ հասցրել էր նորով փոխարինել Գ.Նժդեհ-Խորենացի փողոցների խաչմերուկից մինչև Գ.Նժդեհ-Դպրոցականների փողոցների վերջնամասն ընկած հատվածում $D=110$ մմ $L=210$ մ ջրագիծը, տեղի բաժանորդների համար կառուցել ջրաչափական դիտահորեր և տեղադրել նոր ջրաչափական սարքեր: Բացի այդ, $D=225$ մմ $L=260$ մ նոր խողովակներով են փոխարինվել նաև Գ.Նժդեհ-Սուրբ Նշան փողոցների խաչմերուկից մինչև Գ.Նժդեհ-Բաղրամյան փողոցների խաչմերուկն ընկած հատվածի ջրագիծերը:



Գ.Նժդեհ փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Բերդ

● Քարաշեն փողոցում $D=150$ մ թուջե վթարված ջրագծի հատվածը $D=150$ մ պողպատե ջրագծով փոխարինելուց հետո բարելավվել է փողոցի ջրամատակարարումը:



Քարաշեն փողոցի ջրամատակարարման սխեմա



Այգեստան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Այգեստան փողոցում փոխարինվել է $D=50$ մ $L=50$ մ պողպատե քայքայված ջրագիծը $D=50$ մ $L=50$ մ պոլիէթիլենային ջրագծով, փոխարինելուց հետո խնայվել է $Q=1.5$ լ/վ ջրաքանակ և բարելավվել փողոցի ջրամատակարարումը:

● Մաշտոցի 6 շենքը սնուցող $D=50$ մ $L=30$ մ վթարային ջրագիծը փոխարինվել է $D=40$ մ $L=30$ մ պոլիէթիլենային նոր ջրագծով: Ձեռնարկված աշխատանքների շնորհիվ բարելավվել է շենքի ջրամատակարարումը, և վերացել են ջրի ճնշման հետ կապված բողբոքները:



Մաշտոցի 6 շենքի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Ապարան



Արամ Խաչատրյան փողոցի ջրամատակարարման սխեմա




Մ.Բաղդասարյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Արամ Խաչատրյան փողոցով անցնող $D=50$ մ ջրագծի վթարված հատվածը $D=63$ մ պոլիէթիլենային խողովակով փոխարինելուց հետո խնայվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ: Իսկ Մարշալ Բաղդասարյան փողոցի մի հատվածը սնուցող $D=50$ մ հին պողպատե ջրագիծը $F=32$ մ $L=122$ մ պոլիէթիլենային նոր ջրագծով փոխարինելու շնորհիվ հնարավոր եղավ խնայել $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:

Սաղունց համայնք

● Համայնքի ՕԿՁ-ից դուրս եկող վթարային ջրագիծը $D=75$ մ $L=30$ մ պոլիէթիլենային ջրագծով փոխարինելու արդյունքում խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ: Բսկ ցանցում վթարված ջրագծերը $D=50$ մ $L=10$ մ և $D=75$ մ $L=7$ մ նոր ջրագծերով փոխարինելուց հետո խնայվել է $Q=1,0$ լ/վ ջրաքանակ:



Սաղունց գյուղի ջրամատակարարման սխեմա

Փանիկ համայնք

● Համայնքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել էր $D=50$ մ $L=80$ մ հին ջրագիծ: Այն խցափակումով շահագործումից հանվելու արդյունքում խնայվել է $Q=1,5$ լ/վ ջրաքանակ:



Փանիկ գյուղի ջրամատակարարման սխեմա

Մերձավան համայնք




Մերձավան համայնքի ջրամատակարարման սխեմա

● Համայնքի ջրանցքի մոտակայքում $D=200$ մ $L=105$ մ թուջե ջրագիծը ներարկման միջոցով փոխարինվել է $D=50$ մ $L=105$ մ պոլիէթիլենային ջրագծով: Աշխատանքների շնորհիվ խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:

Նոր Կյանք համայնք

● Համայնքում $D=63$ մ $L=120$ մ վթարային ջրագիծը փոխարինվել է $D=40$ մ $L=120$ մ պոլիէթիլենային ջրագծով: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:



Նոր Կյանք համայնքի ջրամատակարարման սխեմա



a Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Անդրանիկի փողոցում փոխարինվել է $D=110$ մ պոլիէթիլենային ջրագծի $L=200$ մ հատվածը: Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև Հերացի փողոցում: $D=75$ մ ջրագծի $L=220$ մ հատվածը փոխարինվել է $D=63$ մ, իսկ $L=30$ մ հատվածը՝ $D=50$ մ պոլիէթիլենային խողովակով: Իրականացվել են նաև դիտահորերի կառուցման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ 4.5 լ/վ ջրաքանակ:

Ներքին Գետաշեն համայնք



● Համայնքում և Ծակքարից դեպի Ներքին Գետաշեն $D=200$ մ ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել և պողպատե խողովակի եռակցման միջոցով վերացվել է թվով 2 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 9 լ/վ ջրաքանակ:

Արալեզ և Փոքր Վեդի համայնքներ



● Համայնքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 2 վթար, որի արդյունքում ընդհանուր առմամբ խնայվել է մոտ 6 լ/վ ջրաքանակ:

Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

<i>Կատարված աշխատանքները</i>	<i>Չափման միավորը</i>	<i>Քանակ</i>
Չափում հոսքաչափով	տեղ	731
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	28550
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	18985
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	5440
Ջրաչափական հանգույնցներ ուսուժասպիրություն, սխեմաների կազմում	հատ	74
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4447.5
Կառուցված ջրագիծ	մ	5421.3
Կառուցված կոյուղագիծ	մ	320.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	59
Փոխարինված փական	հատ	341
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	374
Մաքրված դիտահոր	հատ	3935
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	80.5
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	2133
Ջրահեռացման ցանցում	հատ	4018
Պոմպակայաններում	հատ	123
Մաքրված անձրևընդունիչ	հատ	2292

Մեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	0	37	0
2	Զեյթուն	2	46	0
3	Մաշտոց	5	35	0
4	Շահումյան	1	46	0
5	Ալավերդի	10	23	0
6	Բերդ	10	6	0
7	Նոյեմբերյան	22	17	0
8	Իջևան	9	18	0
9	Ստեփանավան	20	15	0
10	Տաշիր	26	1	0
11	Ապարան	6	17	0
12	Լոռի, Վանաձոր	69	38	0
13	Շիրակ	76	81	0
14	Արթիկ	38	29	0
15	Սպիտակ	8	24	0
16	Թալին	0	6	0
17	Աշոցք	2	9	0
18	Էջմիածին	20	30	0
19	Աշտարակ	11	11	0
20	Հրազդան	13	6	0
21	Չարենցավան	9	13	0
22	Աբովյան	1	2	0
23	Կենտրոն	6	74	14
24	Հյուսիս	0	79	37
25	Հարավ	2	72	8
26	Էրեբունի	8	105	18
27	Արմավիր	21	65	16
28	Արտաշատ	77	77	57
29	Արարատ	29	41	10
30	Մասիս	53	82	54
31	Գավառ	27	66	54
32	Սևան	15	47	33
33	Մարտունի	1	16	0
34	Վարդենիս	0	11	4
35	Ճամբարակ	2	2	1
36	Դիլիջան	18	40	22
37	Վայք	7	20	16
38	Եղեգնաձոր	18	18	14
39	Զերմուկ	3	10	4
40	Սիսիան	11	38	22
41	Գորիս	4	24	10
42	Կապան	26	35	8
43	Մեղրի	4	11	10
	Ընդամենը	690	1443	412



1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել տարբեր տրամաչափի ջրաչափեր:

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	122	22	9	2	1	5	0	2	1	164
Փոխարինված	29	4	2	3	1	1	0	0	0	40
Տեղափոխված	47	5	1	0	0	1	0	0	0	54
Տեխ. Ակտ	73	28	3	1	1	5	1	0	0	112
Ընդամենը	271	59	15	6	3	12	1	2	1	370

1.3. Ջրահեռացման համակարգ


Քաղաք Երևան

«Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կոյուղագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Կիլիկիա, Բարձրաբերդ փողոց 20, 22 հասցեներում: D=200մմ ջարդված կերամիկական կոյուղագծի L=30մ երկարությամբ հատվածը փոխարինվել է D=200մմ պոլիէթիլենային խողովակաշարով:



Սեպտեմբեր ամսվա ընթացքում Տարածաշրջանների տնօրինությունների կողմից ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև աղյուսակում.

<i>Աշխատանքների հակիրճ նկարագիրը</i>				
<i>h/h</i>	<i>Տեղամասի անվանումը</i>	<i>Կոյուղագծերի լվացում</i>	<i>Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում</i>	<i>Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում</i>
		<i>մ</i>	<i>հատ</i>	<i>հատ</i>
1	Արաբկիր	1508	209	0
2	Մաշտոց	860	218	0
3	Շահումյան	1404	159	42
4	Զեյթուն	500	211	16
5	Ալավերդի	2070	93	0
6	Ապարան	0	35	0
7	Աշոցք	800	7	0
8	Սպիտակ	200	21	0
9	Բերդ	0	5	0
10	Ստեփանավան	1390	21	32
11	Արթիկ	0	89	0
12	Լոռի	3465	194	0
13	Նոյեմբերյան	53	20	21
14	Տաշիր	350	11	0
15	Թալին	0	6	0
16	Շիրակ	500	482	13.5
17	Իջևան	120	49	0
18	Էջմիածին	0	117	0
19	Չարենցավան	1520	61	0
20	Արուսյան	1550	48	0
21	Հրազդան	1370	77	0
22	Աշտարակ	1220	13	0
23	Կենտրոն	612	333	54
24	Հյուսիս	3540	275	60
25	Հարավ	914	340	12
26	Էրեբունի	930	204	0
27	Արմավիր	3370	80	0
28	Արտաշատ	2910	68	0
29	Արարատ	1850	47	0
30	Մասիս	1261	41	0
31	Գավառ	400	31	0
32	Սևան	2912	71	2
33	Մարտունի	400	22	36
34	Վարդենիս	770	17	0
35	Ճամբարակ	0	14	0
36	Դիլիջան	380	42	0
37	Վայք	830	17	0
38	Եղեգնաձոր	86	10	0
39	Ջերմուկ	0	21	0
40	Սիսիան	585	92	29
41	Գորիս	65	31	3
42	Կապան	60	68	0
43	Մեղրի	0	26	0
	Ընդամենը	40755	3996	320.5



1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Գավառի կոյուղու պոմպակայանի «Wilo» մակնիշի պոմպի փաստված մեխանիկական խծուծը փոխարինվել է նորով: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվել և մաքրվել են: Այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ռեժիմով:

Գավառ ԿՄԿ-ի սարքավորումները ստուգվել են, կատարվել են համապատասխան կարգավորումներ: Քանի որ աղբը տեղափոխող բեռնատար մեքենան չէր տեղավորվում ավտոտնակում, իրականացվել է ավտոտնակի դարպասի ձևափոխում:

- Վարդենիս ԿՄԿ-ի ընդունիչ հորը, որտեղ կոյուղաջուրը լցվում է երկու կոյուղու պոմպակայաններից, ամբողջությամբ լցված էր ավազով: ԿՄԿ-ի բնականոն աշխատանքն ապահովելու նպատակով այն լիարժեք մաքրվել է:


Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում դեռևս առկա հին ցուցանակները և պոստերներն ամբողջությամբ փոխարինվել են նորերով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աշխատանքների հակիրճ նկարագիրը


h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	61 297	16,2
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	87 477	25.2
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	51 768	0
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	138 134	9.5
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	132 662	9
6	Ք. Սևան	«Սևանի» N:3 պ/կ	19 797	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N:5 պ/կ	10 367	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	5 300	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	8 600	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5 710	-	-



1.5. Էներգոհամակարգ

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Մամիկոնյանց 27 - 74	Պոմպի աշխատանքի կարգավորում
2	Երզնկյան 1Շ 39	շարժիչի փոխարինում 1 հատ, (2h առանցքակակ, 1լիսեռ, 1 վերանորոգման հավաքածու)
3	Հակոբյանի 2/110 - 29	Պոմպի աշխատանքի կարգավորում
4	Վահր. Փափազյան 11 - 44	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Սունդուկյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
6	Ավետիսյան 67	Պոմպի աշխատանքի կարգավորում
7	Արաբկիր 25փ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
8	Բաբայան 342	Պոմպի աշխատանքի կարգավորում
9	Օրբելի 8 - 6	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (միացման դետալների ռետինե խողովակի փոխում)
10	Կոմիտասի 48Ա.	Պոմպի աշխատանքի կարգավորում
11	Հր. Քոչարի 13 - 73	Պոմպի աշխատանքի կարգավորում
12	Կոմիտաս 7/3	Պոմպի աշխատանքի կարգավորում
13	Կոմիտասի 7/2- 72	Պոմպի աշխատանքի կարգավորում
14	Ղափանցյան 7	պոմպի վերանորոգում 1 հատ, (3h բանվորական անիվ, 1h լիսեռ)
15	Գր. Արծրունի 92 - 32	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1հատ մեմբրան 300լիտր)
16	Սունդուկյան 1,3	Պոմպի աշխատանքի կարգավորում
17	Ս. Բաղդասյան 70 - 47	Էլ. սարքերի գնում կարգավորում
18	Ազատության 3	Պոմպի աշխատանքի կարգավորում
19	Ղափանցյան 73/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
20	Գյուլբենկյան 44	Պոմպի աշխատանքի կարգավորում
21	Մամիկոնյանց 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
22	Մամիկոնյանց 27 - 30	Պոմպի աշխատանքի կարգավորում
23	Արծրունի 70	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Ն.Դուման 53	Պոմպի աշխատանքի կարգավորում
25	Էմին 822.	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1h խծուկ)
26	Մամիկոնյանց 27/1	Էլ. սարքերի գնում կարգավորում
27	Օրբելի 67	Էլ. սարքերի գնում կարգավորում
28	Վ. Վաղարշյանի 1 - 35	Պոմպի աշխատանքի կարգավորում
29	Բաղդասյան 70	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1h վերանորոգման հավաքածու)
30	Ավետ Ավետիսյանի 70 - 58	պոմպի վերանորոգում 1 հատ, պոմպի վերանորոգում 1 հատ
31	Ֆրիկի 2 - 23	Պոմպի աշխատանքի կարգավորում
32	Բարբյուս 63	Պոմպի աշխատանքի կարգավորում
33	Իսրայելյան 43	Էլ. սարքերի գնում կարգավորում
34	Կոմիտասի 14 - 30	Էլ. սարքերի գնում կարգավորում
35	Բարբյուսի 63	ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, շարժիչի փոխարինում 1 հատ, (2h առանցքակակ, 1h վերանորոգման հավաքածու.)
36	Սունդուկյանի 3	Պոմպի աշխատանքի կարգավորում
37	Վ. Վաղարշյան 3 - 41	Պոմպի աշխատանքի կարգավորում
38	Սունդուկյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
39	Կոմիտաս 14	Էլ. սարքերի գնում կարգավորում
40	Վաղարշյան 1,3	Պոմպի աշխատանքի կարգավորում
41	Հ. Էմինի 82 - 26	Պոմպի աշխատանքի կարգավորում
42	Դեմիրճյան Ն 27	Պոմպի աշխատանքի կարգավորում
43	Պարոնյան 28	Էլ. սարքերի գնում կարգավորում
44	Կոնդ 5-րդ թաղ.	Էլ. սարքերի գնում կարգավորում
45	Վաղարշյան 1,3	Էլ. սարքերի գնում կարգավորում
46	Գուլակյան 16բ	Էլ. սարքերի գնում կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
47	Թբիլիսյան խճ. 35	Պումպի աշխատանքի կարգավորում
48	Օրբելի 33	Պումպի աշխատանքի կարգավորում
49	Կիկյան 4/2	Պումպի աշխատանքի կարգավորում
50	Տիգրանյան 7	Պումպի աշխատանքի կարգավորում
51	ք.Եղվարդ,Սումգայիթ թաղ.	Պումպի աշխատանքի կարգավորում, պումպի վերանորոգում 1 հատ, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, (2առանցքակալ, 1բանվորական անիվ, 1լիսեռ,)
52	Տիգրանյան 7	էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, (պումպի փոխարինում, 4հատ անցում)
53	Գյուլբենկյան 19/1	Պումպի աշխատանքի կարգավորում
54	Օրբելի 68	Պումպի աշխատանքի կարգավորում
55	Կիկյան 4/2-22	պումպի վերանորոգում 1 հատ, (2հատ առանցքակալ,1հատ վերանորոգման հավաքածու, 1հատ ավտոմատիկայի կառավարիչ)
56	Գյուլբենկյան 19/1 - 54	Պումպի աշխատանքի կարգավորում
57	Թբիլիսյան խճ 1, 2 Շ	Պումպի աշխատանքի կարգավորում
58	Սուրենյան 2	Պումպի աշխատանքի կարգավորում
59	Ազատության 6	էլ. սարքերի գնում կարգավորում, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, (ռետինե ծողովակն իր միացման դետալներով)
60	Ուլնեցու 49	Պումպի աշխատանքի կարգավորում
61	Դրոյի 24	էլ. սարքերի գնում կարգավորում
62	Դրոյի 62	էլ. սարքերի գնում կարգավորում
63	Ն. Սուրենյան 2 - 53	Պումպի աշխատանքի կարգավորում
64	Ն. Սուրենյան 2 - 27	բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, (1հ ցածր ճնշման ռելե, 1հ խծուկ)
65	Բաշինջաղյան 2-րդ նրբ. 1-41	Պումպի աշխատանքի կարգավորում
66	Լենինգաղյան 52 - 62	Պումպի աշխատանքի կարգավորում, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1հ ֆազի բացակայության ռելե)
67	Լենինգրադյան 52	Պումպի աշխատանքի կարգավորում
68	Շինարարների 15/1	Պումպի աշխատանքի կարգավորում
69	Շինարարների 10/1	Պումպի աշխատանքի կարգավորում
70	Աբելյան 17	Պումպի աշխատանքի կարգավորում
71	մ.Կոտայք ք.Աբովյան Գեղարդի 5	էլ. սարքերի գնում կարգավորում
72	մ.Կոտայք ք.Աբովյան Գեղարդի 5	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ
73	մ.Կոտայք ք.Աբովյան Գեղարդի 5	Պումպի աշխատանքի կարգավորում
74	մ.Արմավիր ք.Էջմիածին Շահումյան 50	էլ. սարքերի գնում կարգավորում
75	մ.Արմավիր ք.Էջմիածին Զվարթնոց 14	էլ. սարքերի գնում կարգավորում
76	Օշական պ/կ	Պումպի աշխատանքի կարգավորում
77	գ.Ազարակ	Պումպի աշխատանքի կարգավորում
78	գ.Կոշ	Պումպի աշխատանքի կարգավորում
79	գ.Օշական	էլ. սարքերի գնում կարգավորում
80	Սեբաստիա 141/1 - 40	Պումպի աշխատանքի կարգավորում
81	Մերձավան 3 Փ 69,(պ/կ)	էլ. սարքերի գնում կարգավորում, (փոխվել է 1հ ջրի պումպ,1հ եռաֆազ թողարկիչ)
82	ԱՅ թաղ. 25շ3	էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ
83	Բաբաջանյան փ./հոսքաչափ/	էլ. սարքերի գնում կարգավորում
84	Զիվանի 11ա	Պումպի աշխատանքի կարգավորում, (1հատ թերմոռելե, 1հատ լիսեռ, 1հատ վերանորոգման հավաքածու)
85	Տերյան 56	Մեկ ֆազի բացակայության կարգավորում
86	Մանթաշյան 4	Վնասված էլ. մալուխի նորոգում
87	Ք.Դիլիջան, Շամախյան պ/կ	Հակադարձ փականի նորոգում
88	Բագրատունյաց 17	Ապահովիչի նորոգում
89	Ք.Սևան, Գումաձոր պ/կ	Պումպակայանից ՕԿՁ կատարվել է էլ. սնուցման մոնտաժ
90	Ե. Թադևոսյան 6 նրբ.	Պումպակայանում տեղադրվել է D=65մմ ճկուն միացում և դետալ միակողմանի պարուրակով (սասուկ) էլ. եռակցումով
91	Մաշտոց 18	Պումպակայանը սնող զսասված մալուխի փոխարինում
92	Արտաշիսյան 45/20	D=50մմ գտիչի, դրան կախովի փականի և ծխնիի փոխարինում



1.6. Մեքենա-մեխանիզմներ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման համար սեպտեմբեր ամսվա ընթացքում մասնակի և ընդհանուր նորոգման են ենթարկվել թվով 10 մեքենաների շարժիչներ, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Վերանորոգվել են թվով 8 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Նորոգվել են թվով 6 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:



Թվով 9 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները: Թվով 3 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով: Թվով 23 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգածողեր, ուղղորդիչ վրաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփսեր, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 9 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Թվով 3 մեքենաների վրա փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 3 մեքենաների վրա իրականացվել է գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Փոխարինվել են թվով 55 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և գտիչներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 8 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմների վրա:

Մնուցման և գազի համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգյորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուցերներ, լիքքավորման հետադարձ փականներ: Թվով 2 մեքենաների ուժեղացուցիչներ վերանորոգվել են, փոխարինվել են ատամնանիփսեր, առանցքակալներ, խտաբուկեր, ներդիրներ: Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 11 մեքե-





նամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, առաժանիվներ, առանցքակալներ, կիսաստիճաններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Թվով 7 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ են իրականացվել թվով 3 մեքենաների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Հաշվետու ամսում գործընթացի աղյուսակետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 183, իսկ ՄՏՍՍ-ում 122 պայմանագրային աշխատակիցներ: 01.10.2018թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 235.925, իսկ ՄՏՍՍ-ում 179.143 պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ստացած բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	356.014	226.708	63,7
		Իրավաբանական անձ	16.634	9.217	55,4
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	250.303	172.553	68,9
		Իրավաբանական անձ	9.737	6.590	67,7
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	606.317	399.261	65,9
		Իրավաբանական անձ	26.371	15.807	59,9

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները սեպտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	396.672	306.681	77,3
		Իրավաբանական անձ	19.941	14.695	73,7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	313.563	203.517	64,9
		Իրավաբանական անձ	12.220	8.028	65,7
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	710.235	510.198	71,8
		Իրավաբանական անձ	32.161	22.723	70,7

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 345, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 243 նոր բաժանորդ:

2.2. Հասույթ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ, ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հատուկ դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:


Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 1493, իսկ ՄՏՍՍ-ում՝ 1307 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	09.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1379	785	407	187
2		Իրավաբանական անձ Ընդամենը	114	50	46	18
			1493	835	453	205
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	1111	433	530	148
2		Իրավաբանական անձ Ընդամենը	196	112	65	19
			1307	545	595	167

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում, լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 262.850մ3 վերահաշվարկված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. սեպտեմբեր ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ ³	Փաստացի հազ.մ ³	Տարբերություն %, հազ.մ ³
Երևան	Սեպտեմբեր	7948	7672	-3,47
Մարզեր		3.905	3.932	0,68
Ընդամենը		11.853	11.603	-2,11

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձում

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Սեպտեմբեր ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1.284 մլն.դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 536 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	1.164.996	1.256.334
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	1.171.895	1.173.069
	%	70.66	83.58	99.02	88.04	100.59	93.37
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	443.557	481.998
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	520.132	501.615
	%	83.26	94.11	117.94	102.54	117.26	104.07
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	1.608.553	1.738.332
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	1.692.027	1.674.685
	%	74.41	86.67	104.13	92.36	105.19	96.34

Տարածաշրջան	Գանձում	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.271.520	1.428.482	1.447.844	11.068.078
	Հավաքագրում	1.194.706	1.401.559	1.284.149	10.059.970
	%	93.96	98.12	88.69	90.89
Մարզեր	Առաջադրանք	481.998	621.594	585.570	4.451.261
	Հավաքագրում	507.621	618.309	535.951	4.497.530
	%	105.32	99.47	91.53	101.04
Ընդամենը	Առաջադրանք	1.753.518	2.050.076	2.033.414	15.519.339
	Հավաքագրում	1.702.327	2.019.869	1.820.100	14.557.500
	%	97.08	98.53	89.51	93,80

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 97 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.60մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 101 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 6.61մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
2116	240889655	1591	128522813	38	7162804	2579	273420702	714	56033637

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարբերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.10.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3.066,6	1.437,2
Բնակիչ-բաժանորդներ	2.039,5	923,9
Իրավաբանական անձեր	1.027,1	513,4
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2.156,1	673,1
Բնակիչ-բաժանորդներ	1.743,6	504,7
Իրավաբանական անձեր	412,5	168,4
Ընդամենը, այդ թվում	5.222,7	2.110,3
Բնակիչ-բաժանորդներ	3.783,1	1.428,5
Իրավաբանական անձեր	1.439,6	681,8


Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Միաժամանակ ՄՏՍՏ մասով դեբիտորական պարտքերի մեջ ներառված են 01.10.2018թ. դրությամբ հանրապետական բյուջեից չվճարված մոտ 90.0մլն. դրամ պարտքը, որը նախատեսվում է վճարել հաջորդ ամիսների ընթացքում:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 127.11մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)





2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.10.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	387.447	304.830	78,68	19.419	14.692	75,66
	Առանց ջրաչափի	9.225	1.851	20,07	522	3	0,57
Մարզեր	Ջրաչափով	284.404	197.794	69,55	11.813	8,022	67,91
	Առանց ջրաչափի	29.159	5.729	19,63	407	6	1,47
Ընդամենը	Ջրաչափով	671.851	502.624	74,81	31.232	22.714	72,73
	Առանց ջրաչափի	38.384	7.574	19,73	929	9	0,97

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.10.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	513.007	273.222	53,26	22.135	4.156	18,78
Մարզեր	331.355	82.822	24,99	13.961	1.769	12,67
Ընդամենը	844.362	356.044	42,17	36.096	5.925	16,41

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 1900, իսկ Մարզերում 1643 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 77 իսկ ՄՍՍՍ սպասարկման տարածքում՝ 288 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ձգգրիտ հաշվառմանը:

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	6,078	4,825	79.4
Սվաճյանի	1,461	1,198	82.0
Օհանովի	1,688	1,276	75.6
Զ.Անդրանիկի	1,750	867	49.5
Առնո Բաբաջանյանի	7,068	3,525	49.9
Իսակովի	231	59	25.5
Ջրվեժ Մայակ թաղ.	1,891	1,459	77.2
Ջրվեժ Բանավան	1,400	1,131	80.8
5 զանգված	6,505	3,681	56.6
7 զանգված	4,683	3,117	66.6
8 զանգված	4,061	2,303	56.7
ԸՆԴԱՄԵՆԸ	36,816	23,441	63.7

«Լոռի» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը: Սեպտեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 9 հասցեներում, որտեղ առկա 2.942 ջրաչափից փոխարինվել է 1.910 ջրաչափ (մոտ 64.9%):

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Տեղադրված ջրաչափերի քանակը	%
Ք.Վանաձոր, Բսահակյան	662	450	68.0
Ք.Վանաձոր, Բսահակյան 1 նրբ.	243	186	76.5
Ք.Վանաձոր, Բսահակյան 2 նրբ.	116	83	71.6
Ք.Վանաձոր, Ավետիսյան	128	56	43.8
Ք.Վանաձոր, Աղայան	516	419	81.2
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	162	106	65.4
Ք.Վանաձոր, Շինարարների	356	246	69.1
Ք.Վանաձոր, Ուսանողական	302	180	59.6
Գ.Գուգարք	457	184	40.3
ԸՆԴԱՄԵՆԸ	2,942	1,910	64.9

«Լոռի» տեղամասի սպասարկման տարածքում, տարբեր հասցեներում տեղադրվել են նաև 666, իսկ «Շիրակ» տեղամասի սպասարկման տարածքում ` 922 ջրաչափական սարք:

2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:


Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	112	72.953	10.414.392
Մարզեր	235	95.736	16.195.028
Ընդամենը	347	168.689	26.609.420



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






3.1. Ջրամատակարարման շարունակականություն



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա շարունակականության տվյալները՝ 98.2%, որոնք 0.9%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)




Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 54 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 6-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:


Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները. Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.




Մարտիրոսյան- Չուխաջյան խաչ.




Նար-Դոս-Խորենացի խաչ.




Դավիթաշեն 2-րդ թաղ. 4ա շ.



Մարաշ 8 և 6 փող. խաչ.






3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 6.925Գվտ/ժ (1.44%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 162 հասցե: Թվով 12 հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՖ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները թերությունները վերացնելու նպատակով:


Ստորև ներկայացված են սեպտեմբեր ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Մաշտոցի 16-16ա		265
Մաշտոցի 18		1503
Թումանյան 31		4339
Ջամբուլի ՕԿՁ		6050
Ագատամարտիկների 78/2		304
Նիզամի 2		176
Վատուտինի 80	Հավելագրում	2727
Օրբելի 8		1296
Ն. Ադունցի 9		931
Ա. Խաչատրյան 26/1		3870
Մունդուկյան 1		24
Մունդուկյան 3, 3ա		1364
Ընդամենը		22801

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ.էներգիայի ծախսը նվազել է 9188ԿՎտ/ժ կամ 27%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ.էներգիայի ծախսը նվազել է 17867կՎտ/ժ կամ 41%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Սեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 14.930կՎտ/ժ (0.91%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում կանխատեսվող էլ.էներգիայի ծախսը նվազել է ամսական 310.388ԿՎտ/ժամ (10.78%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 315564 կՎտ/ժ կամ (5,61%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա



3.3. Աշխարհագրական տեղեկատվական Համակարգ

● Տարածաշրջանների տնօրինությունների ինժեներների կողմից ներկայացված ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:

● «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքների տեղամասային տարանջատում և, առկա տեղեկատվության համապատասխան, տվյալների բազայի ստեղծում ԱՏ համակարգում:

● «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող քաղաքների ջրածերի և կոյուղագծերի երկարությունների հաշվարկ հետագայում հիդրավիլիկ մոդելավորման աշխատանքները կազմակերպելու նպատակով:

● «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքների վերաբերյալ բազայի լրացում և թարմացում (առկա կոյուղագծեր, փականներ, դիտահորեր, ՕԿՁ-ներ), AutoCAD ծրագրային ձևաչափից անցում ԱՏ-ի տվյալների բազայի: Աշխատանքներն ընթացքում են:

● Արաբկիր վարչական շրջանի կոյուղագծերի փոփոխություններ (շահագործումից հանված կամ ավելացված կոյուղագծեր) ԱՏ-ում: Հաշվեռւ ամսվա դրությամբ թվայնացված կոյուղագծերի երկարությունը կազմում է 1764352.89479 մ:

● ԱՏ-ում Կենտրոն վարչական շրջանի կոյուղագծերի վերաբերյալ տեղեկատվության թվայնացում և համակարգում՝ հիմք ընդունելով «Կենտրոն» տեղամասից ստացված (սկանավորած տարբերակ), Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված և ԱՏ խմբի առկա տվյալները:

● «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքների վերաբերյալ թեմատիկ քարտեզների պատրաստում՝ ըստ սպասարկման տեղամասերի տարանջատման:

● «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների օգնությամբ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով: Թվով 142 ֆիզիկական և թվով 56 իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ավելացում բազայում: Երևան քաղաքում

թվով 98 ֆիզիկական և թվով 85 իրավաբանական բաժանորդի տեղադիրքի ճշտում:

- «Մեծ Մասբենի» ՍՊԸ-ի կողմից նախկինում կատարած աշխատանքների տվյալների հիման վրա «Հայջրմուղկոյուղու» ՓԲԸ նախկին սպասարկման տարածքի ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում ճիշտ աշխարհագրական դիրքով GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:

- ԱՏՀ-ում առկա տվյալների ուսումնասիրություն և աղյուսակի լրացում ՀՀ տարածքում հիդրավիլի մոդելավորում իրականացնելու նպատակով:

- Հաշվետվություն կազմում ՀՀ տարածաշրջանում 44 քաղաքների վերաբերյալ՝ ԱՏՀ-ում համապատասխան մոդելավորման տվյալների բազա ստեղծելու, համապատասխան մարզային տեղամասերից տվյալներ հավաքագրելու, հետագայում նախատեսված ժամանակահատվածում հիդրավիլի մոդելավորում իրականացնելու նպատակով: Այն փոխանցվել է համապատասխան մասնագետներին: Հաշվետվությունը գտնվում է քննարկման փուլում:


- «Արարատյան» պոմպակայանի և «Մանթաշ» ջրամբարի վերաբերյալ երկլեզու (հայերեն, անգլերեն) նախագծերի կազմում:

- ԱՏՀ-ում կիրառվող նոր գործիքի (Geo Network) ուսումնասիրություն, որը հետագայում կիրառվելու է տվյալների բազա ստեղծելու ժամանակ հիդրավիլի մոդելավորման համար:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է «Վեղիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մագնիզիային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:

- «Հրազդան» տեղամասի տարածքում գտնվող «Հարավ» ՕԿՁ-ի ելքի ջրատարի վրա հայտնաբերվել է վթար: «Հարավ» ՕԿՁ-ն սնուցվում է «Մաքրավան» պոմպակայանի «Հարավ 1» և «Հարավ 2» պոմպերի միջոցով, որոնք աշխատում են հետևյալ գրաֆիկով. «Հարավ 1»-ը միացվում է ժամը 03:00-ին, իսկ «Հարավ 2» պոմպը առավոտյան ժամը 05:00-ին, որից հետո արդեն ժամը 05:30-ին «Հարավ» ՕԿՁ-ի լցվածության նիշը սկսում է բարձրանալ այնքան ժամանակ, քանի դեռ «Հարավ 2» պոմպը չի անջատվել գրաֆիկին համապատասխան ժամին՝ 17:00-ին: Վթարի հայտնաբերման ժամանակ 2 պոմպերը միասին են աշխատել, սակայն ամբարի լցվածության նիշը չի բարձրացել: Այդ մասին տեղեկացվել է «Հրազդան» տեղամասի աշխատակիցներին, որոնց կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը: Վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով հայտարարվել է վթարային ջրանջատում: Կատարվել են D=500մմ պողպատե ջրագծի գոդման աշխատանքներ: Ստորն ներկայացված է «Հարավ» ՕԿՁ-ի լցվածության նիշի գրաֆիկական պատկերը.




- «Տաշիր» տեղամասի տարածքում գտնվող «Տաշիր» ՕԿՁ-ի ելքի ջրատարի վրա ևս հայտնաբերվել է վթար: «Տաշիր» ՕԿՁ-ն սնուցվում է «Նովոսելցովո» պոմպակայանից, որը սովորաբար, սպառման հետ կապված աշխատում է առավելագույնը 13 ժամ: Սակայն վթարվի ժամանակ պոմպի աշխատանքային ժամը հասել էր մինչև 19 ժամ: Այդ մասին տեղեկացվել են «Տաշիր» տեղամասի աշխատակիցները, որոնց կողմից վթարը հայտնաբերվել և վերացվել է:

- «Մասիս» տեղամասի տարածքում գտնվող «Մասիս Նորաբաց» ՕԿՁ-ն սնուցվում է «Արարատյան 1/2» պոմպակայանից և «Արգաքան» ջրատարից: «Մասիս Նորաբաց» ՕԿՁ-ից սնվող բաժանորդների սպառած առավելագույն ջրաքանակը սովորաբար չի գերազանցել 120/վ-ը, իսկ վթարի հայտնաբերման ժամանակ կազմել է 150/վ: Այդ մասին տեղեկացվել են «Մասիս» տեղամասի աշխատակիցները, որոնց կողմից հայտնաբերվել են վթարներ դեպի «Մասիս Նորաբաց» ՕԿՁ ջուր մղող D=400մմ ջրատարի վրա: Վթարները վերացվել են գոդման աշխատանքների միջոցով: Արդյունքում վերականգնվել է բնականոն ջրամատակարարումը:

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





4.1. Համակարգչային ցանց

Մեկտեմբեր ամսվա ընթացքում Համակարգչային բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- «ՖՀՄՈՒԿ» հիմնադրամի կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության Առևտրային տնօրինությունների մասնագետ-տեսուչների համար կազմակերպվող դասընթացների իրականացման համար ծրագրավորվել և գործարկվել է «ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» ծրագրի «DEMO» տարբերակը:
- Կատարվել է նախահաշվարկ «Վեոլիա Գրուպի» կողմից մեկնարկած SS միջավայրի վերափոխման գործընթացին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հնարավոր մասնակցության վերաբերյալ՝ ըստ «SATAWAD, M2C» նախագծերի:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ «Ինտերակտիվ» և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության Ռազմավարության եւ մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի համար մշակվել և պատրաստվել են տվյալներ, շարունակականության ծրագրի համար:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել Ջրային կոմիտեին և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին և Ընկերության այլ ստորաբաժանումներին:

4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում ներդրվել և գործարկվել է «0 800 00185» անվճար զանգի ծառայություն դեպի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ 1-85 հեռախոսակենտրոն:

4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար ձեռք են բերվել թվով 5 նորագույն բազմաֆունկցիոնալ տպող սարքեր:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Հաշվետու ամսվա ընթացքում համակարգում նկատվել է լարվածության որոշակի մեղմացում, կապված ջրամատակարարման հայտարարված ռեժիմի ապահովման հետ: Դա իր արտահայտությունը գտավ նաև Հանրային կապերի ծառայության /ՀԿԾ/ աշխատանքում, որտեղ նվազել է օպերատիվ գործառույթը, կապված ԶԼՄ-ների ելույթներին, լրագրողներից ստացվող դիմում-բողոքներին արձագանքելու հետ: Փոխարենը ՀԿԾ-ն ստացավ հնարավորություն ավելի շատ ուշադրություն դարձնել հաղորդակցության զարգացման մյուս, այդ թվում հեռանկարային խնդիրներին:

Այսպես, սեպտեմբերին վերջապես սկսվել է համագործակցությունը «Deem Communication» գովազդային ընկերության հետ, որը հաղթող էր ճանաչվել Օպերատորի հայտարարած մրցույթում և պատասխանատու է գովազդային հովույժակների, տեսանյութերի, նկարահանումների, ռեպորտաժների և այլնի պատրաստման ու էթեր հեռարձակման համար:



Քանի որ վերջինին շատ բան անհայտ էր Օպերատորի գործունեության մասին, սեպտեմբերին ՀԿԾ-ի կողմից գովազդակիր կազմակերպության հետ տարվել են աշխատանքներ այս բացը լրացնելու, ջրմուղագործների աշխատանքին ու համակարգի առանձնահատկություններին ծանոթացնելու համար: Նաև «Deem Communication»-ի կողմից սկսվել են «Հաղորդակցություն-2018» ծրագրով աշխատանքների կատարումը՝ ջրանջատման մասին մամուլի հաղորդագրությունները հեռուստաալիքները հեռաձայնելուց մինչև կոնկրետ առաջադրանքները, որոնք հանրությանը կներկայացվեն արդեն հոկտեմբերի առաջին օրերին:

Սակայն ՀԿԾ-ի համար հաշվետու ամսի ամենակարևոր փոփոխումը «Վեոլիա Ջուր»-ի ջրամատակարարման գրաֆիկի հրապարակումն էր: Խնդիրն այն է, որ նախորդ 1.5 տարվա ընթացքում ընկերությունը 3 անգամ գրաֆիկի փոխարեն հրապարակել էր հայտարարություն այն մասին, որ ուժի մեջ են փուլում նախորդ օպերատորների գրաֆիկները: Դա պայմանավորված էր նաև վերջիններիս հայտարարած ու փաստացի գրաֆիկների անհամապատասխանությամբ: Այս անգամ «Վեոլիա Ջուր»-ը «Ժողովուրդ» օրաթերթում տպագրել է արդեն իր գրաֆիկը՝ հոկտեմբեր 2018-ապրիլ 2019 ժամանակամիջոցի համար: Որպեսզի այն առավելագույնս համապատասխանի իրականությանը, ընկերության մյուս ծառայությունների թվում ՀԿԾ-ն նույնպես որոշակի աշխատանք է կատարել՝ գրաֆիկները խմբագրելու, ճշգրտելու ու տպագրության նախապատրաստելու նպատակով: Ընդ որում ողջ գործընթացն իրականացվել է համաձայն ՀՀ ՀՕԿՀ-ի սահմանած կարգի:

Մեծամ, Կենտրոն վարչական կայան		Մեծամ, Կենտրոն վարչական կայան	
Քանակազույգ, սառնակ	Քանակազույգ, սառնակ	Քանակազույգ, սառնակ	Քանակազույգ, սառնակ
Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00	Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00
Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00	Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00
Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00	Մեծամ, Կենտրոն վարչական կայան Սպիտակ, Մարտիկի փ. 9, 1, 2 կք. Բաղնիստան, Ըջրու, Յալիկի փ. 1, 2 կք. Նր. Նազարի 41, 43, 45, 47, 49, 51, 53, 57, 59, 61, 63	Քանակազույգ, սառնակ 7:00-24:00

Միաժամանակ, այդ ընթացքում շարունակվել է բավական ինտենսիվորեն լուսաբանվել ընկերության ամենօրյա գործունեությունը: Խոսքը թե ընկերության ներհամակարգային կյանքի մասին է և թե հանրությանը մատուցվող ծառայությունների:



Ենթ հասկանալը. Խմելու ջրին կարող



MORE VIDEOS

Այսպես, սեպտեմբերին Ֆրանսիական Վեոլիա Գրուպի աշխարհի մոտ 40 երկրներում գործող ձեռնարկությունների նման, «Վեոլիա Ջուր» ընկերությունում նույնպես կայացավ «Առողջության ու անվտանգության միջազգային շաբաթ - 2018»-ը, որը կրում էր «Գործել հանուն ավելի լավ ապագայի» խորագիրը: Աշխատանքները սկսվել են համակարգի կառուցվածքային ծառայություններում, շարունակվել են «Աէրացիա» ուսուճական կենտրոնում և ավարտվել են «Կաթնաղբյուր» սանիտարական գոտի երեխաների այցելությամբ: ՀԿԾ-ի օգնությամբ Հանրային հեռուստատեսության «ԵԿԵՔ ՀԱՍԿԱՆԱՆՔ» հաղորդաշարի հերթական հաղորդման հյուրը եղան «Վեոլիա Ջուր»-ի երկու ղեկավար պաշտոնատար անձինք, ովքեր պարզաբանել են խմելու ջրի մատակարարման հետ կապված որոշ խնդիրներ: Իսկ ԱՊՀ երկրների «MIP 24» հեռուստատեսությամբ դրականորեն է անդրադարձել երևանյան ջրի որակին:

Սեպտեմբերին նախկինի պես շարունակվել է սպասարկվել ընկերության պաշտոնական կայքէջն ու ֆեյսբուքյան էջը: Հրապարակվել են նորություններ համակարգում տարվող շինարարական աշխատանքների ու հաջողությունների մասին: Տարվել է ամենօրյա աշխատանք ջրանջատուճների մասին հաղորդագրությունները ՋԼՄ-ներին, պատկան մարմիններին ու համակարգի աշխատակիցներին ուղարկելու, veolia.am կայքէջում եւ ֆեյսբուքյան էջում տեղադրելու նպատակով: Նաև իրականացվել է մամուլի տեսության ամենօրյա թողարկում:



Մամուլի հրապարակումների ու լրագրողների հարցապնդումների մասով անհրաժեշտության դեպքում ապահովվել է համապատասխան արձագանք: Այսպես, ուղարկվել է պաշտոնական պատասխան «Հրապարակ» օրաթերթին և lurer.com լրատվական կայքին՝ Օպերատորի աշխատանքի մասին ոչ օրյեկտիվ հրապարակումների կապակցությամբ, իսկ Կապանի «Զանգեզուր» հեռուստատեսության, erkir.am ու hetq.am լրատվական կայքերին տրվել է անհրաժեշտ պարզաբանումներ:

Աջակցություն է ցուցաբերվել ընկերության մյուս կառուցվածքային ծառայություններին, առաջացող հարցերի լուծման ու աշխատանքի լուսաբանման գործում: Այսպես, սեպտեմբերին համակարգում գործարկվել է նոր 080000185 հեռախոսահամարը, ընդ որում, սպառողների համար անվճար, որի շնորհիվ Օպերատորը Բաժանորդի համար դարձել է ավելի հասանելի: Այդ մասին հաղորդագրությունը ուղարկվել է ընկերության հետ համագործակցող մոտ 30 ՋԼՄ-ների, հրապարակվել է 5 թերթում, տեղադրվել Օպերատորի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Այս ընթացքում նաև կատարվել են տնօրինության առանձին հանձնարարություններ՝ տարաբնույթ նամակների, տեղեկանքների ու հաշվետվությունների կազմման վերաբերյալ, նպատակ ունենալով հանրությանն ու պատկան մարմիններին հնարավորինս լիարժեք ներկայացնել «Վեոլիա Ջուր» ընկերությունն ու նրա գործունեությունը:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

● «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (ՖՀՄՈԻԿ) կողմից Ընկերության մասնագետ-տեսուչների և խողովակագործների միջին-մասնագիտական որակավորման, դասընթացների կազմակերպման նպատակով Ծառայությունը մշակել է թվով 5 դասընթացների նյութեր՝ «Անհատական պաշտպանության և անվտանգության այլ միջոցներ», «Աշխատանք փակ տարածքներում», «Էքսկավատորի անվտանգ շահագործում», «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջները», «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» թեմաներով:

● Ծառայությունը մշակե է Ընկերության 2019 թվականի վերապատրաստման պլանը:

● Մշակվել է նաև կայուն զարգացման մասով 2018 թվականին Ընկերության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ պրեզենտացիա-հաշվետվությունը:

6.2 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ


Ղեկավարվելով ՀՀ Արարատի մարզպետի 23/01/2018 թվականի N07 որոշմամբ հաստատված ՀՀ Արարատի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջներով՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ին Ընկերության «Արևելք» Տարածաշրջանի Տնօրինության «Արարատ» տեղամասի շահագործման ստորաբաժանումը ՈԱԱ Ծառայության համակարգմամբ մասնակցել է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Շահումյան 20 հասցեում իրականացված հատուկ տակտիկական ուսումնավարժությանը (ՀՏՈ):

Ուսումնավարժության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս, կատարելագործել ուժերի փոխհամագործակցությունը:

6.3 Դասընթացներ

● Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը սույն թվականի սեպտեմբերի 27-28-ին անցկացրել է պայմանագրային հիմունքներով «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ Ընկերության 56 քլորի օպերատորի և հեղուկ քլոր տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցի վարորդի՝ «ԱՎՕ շահագործման մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացներ և գիտելիքների ստուգում:

*2018թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում առողջության և անվտանգության մասով կազմակերպված դասընթացներ/թեստավորումներ**



** Թեստավորումն իրականացվել է ՖՀՄՈՒԿ-ում նախատեսվող կոմբեցիոն մասնագետ-տեսուչների մասնագիտական որակավորման դասընթացի շրջանակներում*

6.4. Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ -2018

● Հիմք ընդունելով «Վեոլիա Գրուպի» Գլխավոր գործադիր տնօրեն Անտուան Ֆրերոյի՝ ս.թ. սեպտեմբերի 17-21-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվող «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2018» ամենամյա չորրորդ միջոցառումների անցկացման վերաբերյալ հանձնարարականը և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրեն Կ.Լ.Ր.Ֆեի 05.09.2018թ. թիվ 42 Լ հրամանը, ՈԱԱ Ծառայությունը կազմակերպել և իրականացրել է «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ -2018» միջոցառումը։ Միջոցառման նպատակն էր բարձրացնել աշխատատեղում առողջության և անվտանգության (ԱԱ) մասով աշխատողների շրջանում իրազեկվածության մակարդակը, շեշտադրել վերջինիս կարևորությունը, տեղեկացնել և խթանել աշխատատեղում ԱԱ կանխարգելման մշակույթի ձևավորմանը։



Ծառայությունը ԱԱ Շաբաթ-2018 միջոցառման շրջանակներում կազմակերպել է նաև Ընկերության աշխատակիցների երեխաների համար ճանաչողական այցելությունը «Կաթնաղբյուր» սանիտարական գոտում։ Այցելության նպատակն էր ձևավորել երեխաների, որպես սպազան կերտողների մոտ բնության հանդեպ սեր, պատասխանատվության զգացում, աշխատանքի անվտանգ կազմակերպման մշակույթի վերաբերյալ պատկերացում, երեխաներին ծանոթացնել ջրի մաքրման գործընթացների, անվտանգության կանոնների հետ և ԱԱ ռիսկերի կառավարման գործընթացներին։



6.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում

● Ելնելով Ընկերության ՀՏԿ-ներում և վարչական շենքերում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գործընթացի գնահատման, Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրել են Ընկերության թվով 38 կառուցվածքային ստորաբաժանումներում պլանավորված Անվտանգության ստուգայցներ: Կատարված Ստուգայցների արդյունքները գրանցվել են հատուկ ստուգաթերթիկներում, որոնց հիման վրա մշակվել է անվտանգության ամփոփ հաշվետվություն:

● Միաժամանակ ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 5 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

